

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

№ 200

C192604372



БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧНОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР



Р. С. Ф. Совет  
ПРЕДСЕДАТЕЛЬ СОВЕТА  
НАРОДНО-КОММУНАРНОГО  
МОСКВА  
КРЕМ



Прошу обратить внимание на положение Дудкина Парфена. Выдайте ему хлеб, как семье красноармейца. Из его Урождкома хлеба. Прокофия, отправьте на государственное содержание серьезное внимание на действие ее отношение к беднякам в исполнении донести

*не пишу  
и пишу*



891.715  
9-22

~~№ 206~~

C19261372

- 0 NOV 2011

№ 8

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 8

~~М~~  
354

Հնդհանուր համազրույթամբ  
ԱԶՍՏ ՎՇՏՈՒՆՈՒ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ЭВOLUTIONОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

891.71Ի

Զ-22

Պ. ԶԱՄՈՑՍԿԻՑ

# ՆԱՄԱԿ ԼԵՆԻՆԻՆ



Պ Ա Տ Մ Վ Ա Ն Ի

Թարգմանությունը ուսուցիչից



Հ.Ս.Խ.Հ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

№ 305

ՄՈՍԿՎԱ


1925

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կլիշեները արտատպված «ՆՈՎԱՅԱ ՄՈՍԿՎԱ»  
Հրատարակչությունից:  
Շապիկի արտանկարը՝ Գ. ԳՈՉԱՐԻ



57012-66



### Ն Ա Մ Ա Կ Լ Ե Ն Ի Ն Ի Ն

Պրոշկայի հոր՝ Պարֆենի տանը են գլխից աղքատություն են:  
Ո՛վ է իմանում, կարոտությունը յե՞րբ, ո՛ւմ դռանը կշոքի: Մեկ էլ  
տեսար՝ յեկավ, դե արի ու շնքիցդ թափ տուր: Պրոշկայի հայրը մե-  
նակ մի բան գիտեր—վոր ինքը միշտ չքավոր է ու չքավոր, վոր  
մարդավայել չի ապրում, ու մի կերպ քաշ է տալիս իր որը: Մար-  
դիկ շուռ ու մուռ են գալիս, խելք բանեցնում ու մի կերպ մի  
բանի հասնում: Իսկ Պարֆենը քամվել է, շշկվել կարիքի ձեռին:  
Գոնե եդ կարիքը մի կերպարանք, յերես ունենար, խոսեր, ման  
գար,—են ժամանակ Պարֆենը, թեև բնությամբ չար մարդ չի,  
բայց մի լավ կտար նրա քիթ ու բերնին, բայց ի՞նչ արած, չի  
յերևում վոր: Թե չե ի՞նչ է կպել յերեխաների ճտիցը, հո են գլխից  
մատիտով գրած չի, վոր եդ կարիքը Պարֆենի հետ միշտ լինի ու  
լինի: Ինչ ասես չարեց մարդը, վոր դրա ձեռիցն ազատվի,—մշա-  
կություն արեց, հոտաղ դառավ, գործի համար դես ու դեն թրև ե-  
կավ,—չե՛ ու չե՛: Ելի են է: Կարիքը խեղճ մարդուց պոկ չեկավ: Մի  
անգամ ել մտածեց թե դաշտիցը ուրիշի խրճեր գողանա: Մատակը  
բարձեց, մի լավ կապոտեց, Պրոշկային ել վրեն դրեց, բայց խիղ-  
ճը չտարավ:

- Թո՛ւ, հորդ գլուխը մեռնի, Պրոշկա:
- Գյուղի հարուստների համար ի՞նչ կա վոր, կուշտ փորով ծիծա-  
ղում են սովածի գլխին.
- Ե՛, քյասիբ, վո՞նց ա քո բանը:
- Հը, քյասիբ, ուզում ես հա՞ց ուտել:
- Ե՛, քյասիբ, բա հերիք չի՞ մատակդ թավալ տա:
- Եստի՛ արի, քյասիբ:
- Քյասիբ, արի հոտաղ դառի:
- Ու եսպես ծիծաղում են հարուստները:
- Ա՛յ, զահրումմար ձեգ:

— Հա՛... հա՛... հա՛... քյասիբը չարացալ, սոված ա երևում:  
 — Ե՛, կգա «ժամանակը»...

Պրոշկայի հորը մի մխիթարութուն կար, թե ուր վոր ե, կգա «ժամանակը», բայց յե՞րբ, վո՞րտեղից—վոչ վոք չեք իմանում, դե ինքը Պարֆենն ել չեք իմանում: Յեվ յերբ այդ մասին հարց եյին տալիս—սուս եր կենում: Բայց իր սրտումը մի ձեն եր լսում, զգում եր, թե ուր վոր ե, կգա՛ եդ «ժամանակը» ու աշխարքի բանը շուռ կը բերի:

— Ու են որը...

— Ի՞նչ են որը...

— Հըմմ...

Պրոշկան մի մատ յերեխա յեր, աչքերը դուրս ընկած, ականչները ցից, քիթն ասես թըշված կաղին:

— Բա յե՞րբ ա գալու եդ ժամանակը:

— Սպասի, բալա, են ա կգա:

Պրոշկան գիտեր, վոր հենց են ե եդ ժամանակը՝ յերբ ինքը բոյ կքաշի, կմեծանա, կգնա քաղաքը մի լավ գործի կմտնի ու հորը կոգնի:

Ինչ արած, սպասել ե հարկավոր:

Յեվ Պրոշկան սպասում եր: Սպասեց, բայց քյոխվան վեր գրեց նրանց կովը—հարկը չեք տված, իսկ մատակը սատկեց դեռ ցանքսը չեկած:

Պրոշկան լաց ելավ: Խոսքեր եր ասում վոնց վոր հասակն առած մարդ:

— Արի ու եստեղը դիմացի:


Յեղբայրներին տարել են ֆրոնտը, վոչ ձեն կա, վոչ անուն: Դե գրանց համար ի՞նչ կա վոր,—մորը ձեռին մեծացել, հիմի գնացել պետության հացն են ուտում: Այ՛, Պրոշկայի բանն ե դժարը, հայրն արդեն չի կարողանում հաց աշխատել ու պառկած ե:

— Իու յես տան աշխատավորը:

Եդ ե, ելի՛, լա՛վ աշխատավոր, չես ասում 9 տարեկան ե, դեռ նրան խաղալ, փողոցում վազվզել ե հարկավոր, մինչդեռ տան դրությունն ենպես ե, վոր յերեխայի կերպարանքը դառել ե լուրջ ու խոսելիս, ասես, հասակն առած մարդ լինի:

Վոնց ելավ, մեկ ել մի ձիավոր եկավ գավառից ու դեմ ու դեմ գնաց քյոխվի տունը:

Քյոխվան դուրս ընկավ, կանչեց գյուղի մեծերին ու ձեռաց



վող գյուղը հավաքվեց քյոխվի տան բոլորքը:

Ինչ վոր մեկը լրագիր կարգաց ու մեկն ել բղավեց: Հետո, Պրոշկան տեսավ, թե վոնց ժողովուրդը ուրախ-զվարթ ընկավ փողոցները:

Ու ետեղը, Պրոշկայի ականջին կպավ դեռ չլսած մի խոսք.  
— Հեղափոխություն:

Գյուղի վարժապետը ձեռով վոտով խոսում եր, հա խոսում: Նրանից ել ավելի՝ բղավում եր գրագիրը. գրագրի մագերը ասես չիստակած բուրդ լինեյին, ինքը չեչոտ եր, վոտները՝ ծուռ:

Բղավում եր են մասին, թե—Մոսկովում հեղափոխություն ա, վոր հիմի բոլոր հողը ժողովրդին ա, իշխանությունը՝ ժողովրդին, իսկ կալվածատերերին պիտի խոխկ տալ:

Պրոշկան բան չհասկացավ ես խոսքերից, բայց գրանցից մեկը գլուխը մտավ.

— Եկավ... եղ «ժամանակը»... եկավ:

Յեվ Պրոշկան մտավ ժողովրդի մեջը, իրեն գցեց առաջները ու կարմիր դրոշակներին հետ սկսեց գյուղի միջին ման գալ:

— Հեղափոխություն:

II

Ո՞վ կարող ե հաշիվ պահի—ինչ ասես Պրոշկան չտեսավ եղ յե-  
րեք տարում: Ե՛լ քյոխվին ու գզիրին գյուղից քշելը, ե՛լ գինվոր-  
ների գյուղ վերագանալը՝ իրենց հրացաններով: Իսկ, վորը գլխա-  
վորն ե, ամեն որ ձեռը վեր եյին բարձրացնում ու իշխանություն  
ընտրում:

Ձեռը մեկ բարձրացնում են—իշխանությունը ընտրված ե, մեկ  
ել բարձրացնում—ուրիշը: Վորտեղից վորտեղ, Ֆրոնտից տուն վե-  
րագարձավ Ստեփանը, վորին գզիրը միշտ քաղաքն եր քարշ տալիս:

Գլխին՝ պոպոզ, գոտուց՝ սլին, հրացանի ծերին՝ սվին, ճակա-  
տին՝ աստղ: Լեն գոտին գցել եր մեջքով, վրան՝ գրած:

— Դե հիմի, բուրժույ, քո հախիցը... Ձերը պրծա՛վ:

Ամեն որ հավաքում եր ժողովուրդը ու մի գլուխ բղավում  
եր ինչ վոր բանի մասին, ասես թե նեղացրած լինեյին նրան: Խո-  
սում եր բուրժույների, հեղափոխության, Լենինի ու գյուղի տուգե-  
րի մասին:

Բայց Պրոշկան սրտումը ցավ ունի: Ճիշտ ե, կոմիտեյից խա-  
նութպանին ու յեկեղեցու հոգաբարձվին քշել են, ու նրանց տեղը  
աղքատների յեն նստացրել,—բայց ե՛լի կյանքը դժար ե: Պրոշ-

կան տեսավ, վոր չորս կողմը ամեն ինչ փոխվեց,—և՛ մարդիկ փոխ-  
վեցին, և՛ խրճիթները, և՛ ինքը, հենց Պրոշկան խելքացավ, բայց  
են մեկը՝ հայրենական աղքատությունը չփոխվեց, ե՛լի մնացել,  
չարչարում ե, հոգի հանում... Պրոշկան չկարողացավ դրա հետ  
գլուխ խփի, իսկ հայրը—դե ընկել ե ուժիցը:

Հայրը իսկի չուզեց քեռի կուզմայի հետ զնալ հարուստների  
ամբարից յերկաթի ցողեր բերի, կամ սելը ու յեգ բերի:

Ու՞ր պիտի գնա, ի՞նչ պիտի քաշ տա՝ քանի վոր աղիքացավ ունի:

Ե՛հ, վա՛տ հեր ե: Ա՛յ, իրենց հարևանն ուրիշ բան ե: Կայարանից  
բան ունի բերած: Կամ քեռի մոնկան ու մորքուր Լուկարը յե-  
րու պատվական վոշխար յեն բերել ու մի դոշ: Մին ել ենպիտի հա-  
յելի, վոր ոճորքին ե հասնում:

Թե մտիկ տաս մորքուր Լուկարին, քիթ ենպես վեր ե քաշել,  
ենպես ե ծիծաղում, վոր ուզում ե ասի թե, ինձ հետ հանաք չի  
լինի անել, յես պարոնի կնիկ եմ:

Իսկ Իլիա կարկինը—գյուղի նախանձն ե շարժում, իր համար  
պսպղուն նախշերով դուռ ե ճանկել, ու մի պահարան՝ վեց աչքանի,  
ապակե սարքով:

— Ձե՛, իմ հերն վատն ա, հիվանդ ա:

Չմեռն ել վրա տվեց, իսկ նա ո՞չախի կողքն ընկած տնքում ե:

— Եղ վոր տնքում ես, բա հա՞ցը ով պիտի բերի,—հարցրեց  
Պրոշկան պնդացնելով իր թոկից շինած գոտին:

— Դու յես տան աշխատավորը:

— Հենց ե՛ղ ա, լա՛վ ես ասում, յես եմ աշխատավորը: Բա յես  
վոնց պիտի անեմ, չե՞ վոր պուճուր եմ:

Ձե, Պրոշկան փոքր չի: Նա մեծ ե դառել: Ապա կարո՞ղ  
են նրան դուրս անել Ստեփանի տնիցը, վորտեղ ամեն որ հավաք-  
վում են գյուղացիք ու զրույց անում:

Ստեփանը նրան ասաց.

— Պրոշկա՛, ժամանակդ հասել ա, ի՞նչ անենք վոր բեղդ ա  
պակաս. արի՛ ու գործի կալի:

Իսկ տանը մայրն ասում եր.

— Հերդ անտեր ա, անշնորք ա: Ի՞նչ ես վեր ընկել դրա կողքին:

Գնա՛ մարդամեջ, վորտեղ նրանք քիթը կը կոխեն՝ դու ել ենտեղ  
կոխի: Թե պինդ կփխեն, քիչ յետ կը կենաս:

Խելոք, խորամանկ ե մայրը: Նա վողջ կյանքը տերտերի ու  
տերտերակնոջ լվացքն ե արել: Թե յերեխաներ չեր ունեցել՝ հիմի եգ  
աղքատության հողին կառներ:

— Գնա Խորհուրդը, գնա Ստեփանի մոտը, մտիկ տուր, բան



իմացի:

Ինչ է, Պրոշկան ականջումը հո բամբակ չունի՞ կոխած: Խորհրդում շատ բանի մասին խոսք է լինում, ենքա՞ն բան են ասում բայլընկիւնների մասին:

— Հարուստները վատն են, քյասիբները—լավը:

Յեկ յերբ գյուղի բայլընկիւններից մեկն ու մեկն արագ եր խրմում ու հարուստների հետ քաշ գալիս—Պրոշկան չարանում եր.

— Բա իշխանությունը, ո՞ւմն ա:

— Քյասիբներին:

— Հա՛ւ, քյասիբներին, դե են ժամանակ քյասիբներին քոմակ արեք, ել ի՞նչ եք հարուստների հետ քշփչում, ինչի՞ եք քյասիբներին ծուռ մտիկ տալի:

— Ծծկերին մտիկ տվեք:

— Բա Լենինը ի՞նչ է ասել:

— Հը, ի՞նչ ա ասել:

— Մտահա՞ն եք արել:

— Մաներս գցի:

— Յես գիտեմ թե ինչ է ասել:

— Գիտի... ա՛յ քեզ բան:

Ու եսպես մի լավ անարգում, զարմացնում եր բոլորին, թքում ու Ստեփանի մտան եր գնում:

III

Պրոշկան բերան բաց լսում եր Ստեփանին ու վոչ մի խոսք չեր թոցնում:

Պրոշկան քշից շատից կարդալ գիտեր ու Ստեփանից գրքույկներ եր վերցնում: Կարգաց ու իմացավ ինչ բան է հեղափոխությունը, ովքեր են կոմունիստները, ով է Լենինը: Ստեփանը նկատեց, վոր Պրոշկան շատ է հարցնում Լենինի մասին, ու մի անգամ, իրիկվան, Լենինի կյանքի մասին Պրոշկային շատ պատմեց:

— Բա դու նրան տեսել ե՞ս:

— Հա, հետը խոսացել եմ:

— Չե՛ք:

Պրոշկան չեր սիրում շատ խոսել:

— Գեղացիներն ու բանվորները մեկ են, իշխանությունը նըրանցն ա:

— Աղ ու չիթ կտա՞ն:

— Ամեն ինչ կտան: Մենակ բանվորներին հաց ա հարկավոր:

— Կտա՞նք:

Յեզ աննկատելի կերպով, հասարակ խոսքերով, Ստեփանը Պրոշկային, ինչպես և մյուս գյուղացիներին բացատրում էր են բուրբը, ինչ վոր հոգս էր դառել նրանց...

Չե՞ վոր Պրոշկան կարգին գյուղացի տղամարդ է, աշխատավոր: Հայրը պառկած տնքում է, վորը չի կարողանում գետինը գնի: Ուժից ընկել է:

Ու յերբ Պրոշկան Ստեփանի մոտ էր լինում, իրեն թեթևացած էր զգում: Բայց հենց վոր տուն էր գալիս — ելի՛ սիրտը լցվում էր, չեր կարողանում տանի: Պրոշկայի տնտեսութունը վատ որի յեր: Ինքն էլ վոր տեսնում էր եղ՝ ուզում էր թե արա՞քի, ցավիցը չեր իմանում ինչ անի, արտասուքը գալիս մնում էր կուպերումը սառած:

Եղ դառնութունը հերիք չի, երեխեքն էլ ճշում ու հաց եյին ուզում: Մայրն էլ են կողմից լալիս, հետո ճարը կտրած, նրան Գրիշայի հետը դուրս էր անում տնիցը, վոր ինչ է՝ փողոցումը ման գան, ժամանակն անց կենա:

Յերկու ամսից, Պրոշկային պատահեց միանգամից յերկու դժբախտութուն, — Ստեփանը կրծքին ունեցած վերքիցը մեռավ: Մայրը վուկրացավ բռնեց, ընկավ կողինը: Պրոշկան ընկավ հարևանների դուռը, վոր մի կտոր հաց ճարի, բայց հարևանները չըտվին, ազգականները Պրոշկայի որումն էյին, իսկ ծանոթները վազուց էյին յերես թեքել նրանից:

Մի անգամ էլ հայրը հոգոց հանեց, խոր տնքաց, իսկ մայրը ախ ու վախով գրկեց յերեխաներին, լաց եղավ ու մնաց լալված: Յերեխաները փաթաթվեցին նրան, թևով սրբում էյին աչքերն ու աղաչանք անում, վոր «լաց չլինի», վոր «իրանց իսկի պետք էլ չի հացը»:

Պրոշկայի գույնը թափել էր, աչքերը պեծին էյին տալիս: Կուչ յեկած մի անկյուն՝ ամբողջ մարմնով դողում էր:

Իսկ մայրը կողքի վրա ընկած՝ կրկնում էր.

«Բա ո՞վ ա մեր ախրա-կանը»...

«Ո՞վ պիտի մեզի մեղ-քա-նա՞»...

Մորը վոչ վոք չեր կարողանում պատասխանի: Նա դարձավ հորը ու սկսեց կծու կծու վրա տալ.

— Ի՞նչ, իսկի բանի պետք չես, անտեր, բա դու մա՞րդ ես, վախենում ես թե մարդու յերես տեսնես, հոգիս հանեցիր ելի՛, ուր ա թե սատկած ըլեյի, հիմի պրծած կլնեյի:

Ու ես խոսքերից, հայրն սկսեց էլ ավելի դառը տնքալ: Հագում է ու խուլ հեկեկում, կեղտոտ ձեռներով սրբում աչքերի ար-

տասուքը:

Պրոշկան չդիմացավ, փախավ գնաց Խորհուրդը: Ծանապարհին խրվեց ձնափոսերի մեջը, մի քանի անգամ բուքը տվեց ու յերեսի վրա փռեց, սառուցի փշուրները ծակոտեցին, քերեցին նրա վոտները:

Խորհրդում, թղթերի վրա գլուխը քաշ՝ նստած էր քարտուղարը, քունը աչքերին, յերերվում էր նրա գլուխը, ասես թե քթովը կուտ լիներ ուտելիս:

Պրոշկան մտիկ տվեց նրան, հիշեց Ստեփանին, մեղքն եկավ: Հարևանցի մտիկ տվեց պատերին կայքած թղթերին ու աչքովն ընկավ, վոր բոլորի ձոթերը պատառոտած են:

— Թութուն կլինեն փաթաթած — մտածեց Պրոշկան:

Յերբ դուրս եկավ Խորհրդից, էլի բուքը բռնեց: Կատաղած բուք էր, գժվածի նման: Ասես թե նա էլ դեմ լիներ Պրոշկային:

Առանց մտքումը բան ունենալու, յերկար ժամանակ ձների մեջ Պրոշկան թրև էր գալիս գյուղումը: Նա ինքն էլ չեր իմանում թե ինչու է ման գալիս, ինչ է ուզածը:

Ցրտից վոսկորները խշրտվում էյին, յերբ նկատեց, վոր մոտեցել է տանը: Արդեն բոլորը քնել էյին: Նստեց սեղանի մոտ, վառեց ձեթի ճրագը, վորի մուրն ու հոտը իսկույն տունը բռնեցին:

Սեղանի վրա քիչ չոր հացի կտորտանք կար դրած, մի աման էլ ջուր:

Չոր հացն ուտելուց հետո, փորումը ավելի սուր քաղց զգաց, գլուխը պտուտ եկավ: Չուր խմեց, քիչ թեթևացավ: Սեղանի վրա ընկած՝ Պրոշկան յերկար մտածում էր:

Չես իմանում ինչու, Ստեփանը միան ընկավ... նրա պատմածները Լենինի մասին...

Ու մի միտք սկսեց վառել, քրքրել նրա ուղեղը: Միրտն սկսեց խփել, ձեռները դողում էյին, և զարմանալի՛ բան՝ մի տեսակ ուրախութուն եկավ վրան, ասես թե չորս կողմը լուսացավ:

— Եղ ա, Լենինը:

Իսկ բուքը առաջվա նման թակում էր տան դուռը, վոռնում, մլավում, քանդում կտուրը:

— Եղ ա... մենակ թե... վախում եմ:

Դողալով ձեռը պարզեց գրքերի տոպրակին:

Շտապ դուրս հանեց տետրակը, մատիտը, վախեցած մտիկ տվեց՝ բոլորը քնած են թե չե, ու դարսեց սեղանի վրա:

Հետո, վախը սրտումը, մի կողմից էլ ուրախ՝ հոգոց հանեց ու գրեց.

«Քեռի Լենինին»

Գլուխը թափ տվեց ու վճռական ավելացրեց.

«Պրոշկայից».

«Եդ յես եմ գրում, քեռի, յե՛ս, Պրոշկան, Իուդկին Պարֆենի տղեն:

Իու եղտեղ յես ապրում, քաղաքումը, իսկ յես հորս հետ գեղումը հալ ու մաշ ենք լինում: Իսկ մեր գեղը մեծ ա, քաղաքիցը հեռու: Իսկ հերս աղիքացավ ունի, աղիքը դուս ա գալի: Իսկ մերս պառկած ա սաղ, ու տնքում ա, իսկ մենք իսկի հաց չունենք, բան չունենք ուտելու, իսկ հարուստները չեն տալի: Մերս տերտերակնոջ լվացքն ել չի անում, ձեռների կաշին պղտկվել ա: Իսկ մեզ ելի դուրս ե անում փողոցը: Ես որը դուս արավ՝ յես չգնացի: Գրիշկան գնաց: Իսկ մեր հերը—անունը Պարֆեն ա, կարող ա լսած լինես—իրա աղիքացավի հետ ա սաղ: Իե նա եղպես գույնը թափած ա ու սաղ կյանքում կուացած ա ման գալի: Պատահում ա, հարցնում ես — «ա՛ հեր, ինչի՞ յես եղպես ման գալի», ասում ա — «քյասիբու-թյուն ա, բալա, մեջքիս ենքան հոգս ունեմ դարսած վո՛ր»:

Քեռի, գիտեմ, դու եդ տեղ կարգադրություն ես արել, վոր մեզ հոգ տան,—հողը տվին, եդ մեկը զրուստ ա, մենակ՝ ոգուտ չկա: Ախր մեր մատակը հլա ցանքսը չեղած սատկեց: Ենքան լըղար եր վո՛ր: Ու հիմի վոշ մինը չունենք: Վոշ մատակ ունենք, վոշ կով ունենք: Բա ի՞նչ պիտի անենք՝ մենք ել չենք իմանում: Խորհուրդը, անդամները մեզ տերություն չեն անում, իսկ հերս պառկած ա սաղ, ու սպասում ա, թե «ժամանակը» կգա ու աղոթք ա անում: Յես ել ասում եմ նրան.— «ժամանակը եկել ա, իսկ աստծուն չհավատաս, սուտ ա, մեզ խափել են»: Հերս ուշունց ա տալի»:

Պրոշկան եստեղ կանգնեց, աչքերը մթնեցին, ընկավ սեղանի վրա, հեկեկաց, ու արտասովխառն շարունակեց— «Իժար ա ինձ համար, քեռի, թե իմանա՛ս: Ա՛յ 12 տարեկան եմ, ու աշխատել ա հարկավոր: Մեր տանը շատ ենք, սաղ «խուժան» ա, ու բուլորն ել հաց են ուզում: Ինչ անեմ՝ յես ել չեմ իմանում: Ախպերներիս Ֆրոնա են տարել ու իմ հույսը մենակ քեզ վրա յա: Իրա համար ել քեզ եմ գրում: Իե՛ դու կհասկանաս ելի: Յես գիտեմ, դու բարի յես:

Են ել եմ ուզում գրեմ, վոր պատկերդ մեզ մոտ՝ Խորհրդումը տեսնում եմ: Գլուխդ քաշալ ա, մի հատ ել պուճուր միբուք ունես ու մի աչքդ ել ուրիշ տեսակ ա մտիկ տալի:

Բան եմ ասում, քեռի Լենին, թե պատահի վոր քեզ բաց թողան,

կամ ինքդ մի տեղ գնալու լինես, ես ժամանակը վոնց վոր լինի, գարնանը անց կաց մեր գեղը: Ձմեռը չգաս, մեր գեղը հեռու յա քաղաքիցը: Թե գաս, իմացած կաց կմրսես անպատճառ. աղանջներդ, վոտներդ ցուրտը կտանի: Հենց վոր կգաս՝ դեմ ու դեմ—մեզ մոտ: Ճիշտ ա, սամավար չունենք, բայց կճարենք հարեվաններից... Մենակ թե՛ մեր խրճիթը մրոտ ա, բայց դու ենպես կնստես, վոր շորերդ չկեղտովես: Վոր գաս՝ շատ բան ունեմ, կասեմ քո աղանջին: Յես հիմի բա՛ն գիտեմ: Ա՛յ, յերբ մենակ եմ լինում նստում եմ մեկ մեկ մտածում, ու անպատճառ գլխումս մի միտք ա գալի: Ոչ ով չկա վոր հետը խոսամ: Մերս չխոսկան ա, հերս ուշունց ա տալի սաղ:

Եստեղից մինչև կայարանը մենք քեզ արաբի վրա կտանենք, ինքս քեզ կտանեմ մեկն ու մեկի արաբի վրա: Կարող ա նախագահը տա: Թե չտվին՝ մեկն ու մեկի ձին կլծենք, հետո յես աշխատանք կանեմ տեղը:

Քեռի, բա գիտե՛ս — երազումս քեզ տեսնում եմ մի մի անգամ: Չեմ իմանում, երազին դու հավատում ես թե չե, յես չեմ հավատում: Երեկ մերս ինձ ուշունց տվեց, ասում ա. «Աղանջս տարար եդ քո Լենինովը, աղոթք արա նրան, կարող ա մի գրվանք աղ ուղարկի քեզ համար»: Իու չնեղանաս: Տգետ կնիկ ա, բան չի հասկանում: Իրա որումը գրի երես չի տեսել»:

Կողնքի մեջ յերեխաները շուռ եկան, նրանցից մեկը փնթվընթաց: Որորոցի յերեխան ծվաց:

Մայրը զարթնեց:

Պրոշկան նամակը թաքցրեց ու գրքի վրա կուացավ:

Մայրը քնաթաթախ ձեն տվեց.

— Ի՞նչ ես անում եղտեղ.

— Կարդում եմ:

— Աքլորները յերկու բերան կանչեցին, պառկի քնի:

— Ես ա վեր եմ կենում, ա՛ մեր:

Մայրը աչքերը խփեց, իսկ Պրոշկան շարունակեց.

«Ենքան ցավ ունեմ վո՛ր: Ինչպես երևում ա՛ ուշ ա: Ետենց ելի: Ա՛րի, ինձ ձեռաց կգտնես: Յես պուճուր եմ, գուլխս՝ քաշ: Թե ժամանակ չես ունենա՝ գոնե նամակ գրի: Իրար նամակ գրենք: Շատ գրի, յես կարամ շոկել:

Մի բան ել ասեմ, քեռի, մեր մեջը մնա,—մտքումս դրել եմ, վոր մեծանամ, գրվելու յեմ քո կուսակցության մեջը, պիտի կրվեմ քյասիբության դեմ: Քյասիբությունը հարուստների երեսիցն ա: Ես քանը:

իմ հասցեն ես ա՛ Պենզ. նահանգ, Չեմբարսկի գավառ, Սորո-  
լեվկա գեղ, Դուզկին Պարֆենի աղա Պրոշկա:

Հգաս, սպասում եմ:

Բարով մնաս:  
Ես նամակը գրեց քեզ՝

Պրոշկա»:

Նա մի քանի անգամ դառն ախ քաշեց, շտապ շտապ կարդաց  
նամակը, մի քանի բան ջնջեց, նորն ավելացրեց, թղթից ծրար շի-  
նեց, հետո մուր ածեց թանաքամանում, խառնեց, շինեց թանաք  
ու գրչով ծրարի վրա գրեց.

«ՄՈՍԿՈՎ, ՍՏԱՆԱ ԼԵՆԻՆ».

Առավոտը ձեզին, իրեն գցեց փոստը, նամակը գցեց արկղը,  
սիրտը թեթևացավ, շունչ քաշեց ու վազ տվեց տունը, սպասեց,  
վոր քնիցը վեր կենան:

Նա հավատացած էր, վոր քեռի Լենինը նրան անպատճառ կը  
պատասխանի: Չէ՛ վոր նա գրել էր նամակում ինչ վոր կա, — բաց  
էր արել իր սիրտը:

Կպատասխանի:

IV

Յեվ... հրաշք: Ես տեսալ հրաշքից Պրոշկայի շունչը մուրրվեց  
ժողովուրդ: Նա վերացավ, գլխակոնձի յեր տալիս՝ յերբ Խորհրդից  
յեկան նրա ու հոր յետևիցը:

— Լենինից ձեզ թուղթ ա եկել:

Խորհրդում քուրքը հագին մի մարդ էր կանգնած: Նա ժպտաց  
Պրոշկայի ու հոր յերեսին և կարդաց.



Ռ. Ս. Ֆ. Ն. Շ.

ՊԵՆՉ. ՆԱՆ. ՉԵՄԲԱՐՍԿՈՒ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄՄՍՈՒՆԻՍՏԻ

ԳԱՎԳՈՐԾԿՈՄԻՆ

Խ Ո Ր Հ Ր Գ Ի

Ն Ա Խ Ա Գ Ա Յ

Խնդրում եմ ամենալուրջ ուշա-  
դրություն դարձնել Սորոլեվկա գյուղի  
գյուղացի Դուզկին Պարֆենի աղքատ  
ղրության վրա: Տվեք նրան Սոցապից  
շորեր և ձի, վորպես կարմիր-բանակա-

ՄՈՍԿՎԱ

ԿՐԵՄԼ

26/XII, — 1920 թ.

յինի ընտանիքի Գավհողբաժնից բաց թողեք փայտ, Գավպարեն-  
կոմից՝ հաց:

Նրա վորդուն՝ Պրոշկային ուղարկեցեք քաղաքը սովորելու 1  
աստիճանի գպրոցում՝ պետական ծախքով: Նույնպես և լուրջ ու-

շաղրություն դարձրեք տեղական իշխանության գործունեյության,  
նրա վերաբերմունքի վրա՝ դեպի չքավորները:

Կատարման մասին հաղորդել ինձ:

ԺԿԽ Նախագահ

Վ. Կյանք (Լենին)

V

Արդեն լինելով քաղաքում՝ պատահում էր, վոր Պրոշկան դա-  
սերից հետո յերկար նայում էր թանգագին քեռու՝ Լենինի նկարին,  
ու չէր կշտանում:

Իսկ յեթե մեկն ու մեկը Գավկոմում կամ Յերիտկոմում Լենինի  
մասին խոսք բացեր՝ Պրոշկան ականջները սրում, կարմրատակում,  
աչքերովը ուզում էր խոսողին ուտի:

Չէ՛ վոր խոսում էյին նրա՝ բարի ու սիրելի քեռի Լենինի մա-  
սին, վորը աղքատներին պաշտպան է կանգնած, և վորի համար  
Պրոշկան իր ամբողջ կյանքը կտա:

Մի կյանքն ի՛նչ, տասն էլ վոր ունենա, — բոլորը կտա:



Handwritten text at the top of the page, appearing to be a header or introductory paragraph.

Handwritten signature or name in the upper middle section.

Main body of handwritten text, consisting of several lines of script.



ԳԻՆԸ 25 ԿՈՊԵԿ

3261

807

ԳՐԱԴԱՐԱՆ  
ԻՆՏԵՐՆԱԿԱԼ  
ՎՍՏԱՆՈՎԵՐԵՆԻԱ  
Ակադեմիկ Մալու  
ՍՍՏՐ



215